ԱՐԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

Արվեստագետի ուղին միշտ էլ դժվարին է: Եվ որքան մեծ է արվեստագետը, այնքան ավելի բարդ ու ողբերգական է այդ ուղին, որովհետև արվեստագետը, իր նյութն առնելով աշխարհից, պատասխանատու է ամեն ինչի համար. դա նրա պարտականությունն է սեփական համոզմունքի, խղճի առաջ, դա նրա ճակատագիրն է, նրա խղճմտանքն ու օգնությունը, նրա իմացությունն ու կանխատեսումը, որոնք ամրապնդվում են սեփական կապտուկների և ուռուցքների, սեփական ողբերգության փորձով:

Արվեստագետը տառապում է միայնակ, բայց նրա անհատական ճակատագիրը ընդհանրական է:

Այսպիսին է ինձ ներկայանում նաև Ֆրանց Վերֆելի տաղանդավոր անհատականությունը՝ մեր 20-րդ դարի արյունոտ հորձանուտներով անցած անհանգիստ ու խռովահույզ կյանքի ստեղծագործական սխրանքի դժվարին ուղու բոլոր կանխատեսումների ու տառապանքների մեջ:

Ֆրանց Վերֆելը ծնվել է 1890 թվականին Պրագայում, հրեա հարուստ առևտրականի ընտանիքում: Գիմնազիան ավարտելուց հետո սովորել է Լայպցիգում ու Համբուրգում: Ճշմարտության որոնման նրա ընկերներն են եղել Կաֆկան և Էգոն Էրվին Կիշը:

Նա շատ վաղ հիվանդացավ «բոլոր մարդկանց հոգեպես բարեփոխելու ճանապարհով աշխարհը նորոգելու» անբուժելի ցավով:

Նա քրիստոնեությունից նետվեց մարքսիզմին: Եվ մինչև ստեղծագործական հանճարի վերջին մարմրումն այդպես էլ ամուր հող չգտավ իր անհանգիստ որոնումների համար:

Նա գրեց բանաստեղծություն ու դրամա, ակնարկ ու էսսե, վեպ ու պամֆլետ և բոլոր ժանրերում էլ թողեց իր խոսքը, իր արտասովոր անհատականությունը, որն այժմ էլ հետաքրքրում է ոչ միայն գրականության պատմաբանին:

Նա մահացավ Կալիֆոռնիայում, 1945 թվականին, և հալածականի հուսախաբության կիսախավարը, որ թեթևակի լուսավորվեց հաղթանակի հրավառությամբ, ծանրացավ օտար հողում թաղված նրա աճյունի վրա:

Նա որոնող անհատականություն էր, որ տիրապետում էր կանխազգացման և կռահումի հավվագյուտ ունակությանը:

Նա 20-րդ դարի եվրոպական մշակույթի լավագույն ներկայացուցիչների շարքում, Ռոմեն Ռոլանի ու Թոմաս Մանի, Լիոն Ֆեյխտվանգերի ու Պիեռ Լագերկվիստի հետ միասին և միաժամանակ առաջինն սկսեց անձնական պայքար ընդդեմ ֆաշիզմի: Դա դաժան պայքար էր, մահու և կենաց պայքար:

Եվ, ինչպես ամեն մի արվեստագետ փորձում է իր իսկ ճակատագրով ըմբռնել ժամանակը, իր ստեղծագործական անհատականությամբ կապել անցյալն ու ներկան, Ֆրանց Վերֆելն ունեցավ իր ողբերգությունը և իր թռիչքը:

Ու այդ թռիչքով նա արժանացավ անմահության:

Խոսքս «Մուսա լեռան քառասուն օրերը» էպիկական վեպի մասին է:

Այդ գիրքը գրվեց 1933 թվականին և եղավ առաջին ազդանշաններից մեկը, որը թե՛ բուն Գերմանիային և թե՛ ողջ մարդկությանը նախազգուշացրեց իսկական ֆաշիզմի հայտնվելու, նրա սահմռկեցուցիչ, արյունոտ էության մասին:

Այդ գիրքը հստակ ու համոզիչ կերպով ցույց տվեց, որ Հիտլերն ու Մուսոլինին 20-րդ դարում ունեցել են իրենց նախորդները, ահազանգեց Եվրոպային և ողջ աշխարհին, որ այդ աշակերտներն ավելի հեռուն կգնան ուսուցիչներից իրենց արյունոտ գործերի թե՛ չափերով և թե՛ հնարամտությամբ:

Գիրքը մարդկանց կոչում էր զգոնության: Այն ոչ միայն հուշարձան էր ցեղասպանությանը, այլև՝ ամենից առաջ դիմադրության դասագիրք էր: Այն մերկացնում էր թե՛ մարդկության դահիճներին և թե՛ նրանց արյունոտ փիլիսոփայությունը:

Ֆրանց Վերֆելը գիտեր, որ դահիճը, ամեն ինչից վատ, գարշելի ու վտանգավոր է նրանով, որ երբ պարապ է մնում, սկսում է իր համար կրաղմունք հնարել ու որոնել, և նա, ով մի անգամ արդեն համտեսել է մարդկային արյունը, այլևս չի կարող ապրել առանց դրա:

Ֆրանց Վերֆելի գիրքը կես դար շարունակ մարտնչել է մարդկության դահիճների դեմ և մինչև օրս էլ շարունակում է իր պատմական ակնիվ առաքելությունը: Այն թարգմանվել է եվրոպական համարյա բոլոր լեզուներով՝ սովորեցրել է մարդուն՝ դժվարին պահին վոհել իրեն հանուն մերձավորի: Գիրքն այդ մեծագույն սխրանքն ուսուցանում էր նաև ֆաշիզմի՝ 20-րդ դարի գարշելի ու սահավոր այդ չարիքի ջախջախման տարիներին, և թերևս ըստ արժանվույն դեռ չի գնահատված նրա այդ ծառայությունը: Այդ գիրքն այժմ էլ մարտական շարքերում է: Այն շարունակում է Ֆրանց Վերֆելի հոգու

ալնիվ գործը, և դեռևս անպարփակ է նրա ներգործության հորիզոնը: Եվ Ֆրիդրիխ Շիլլերի այն խոսքերը, թե՝ եթե մարդ անհրաժեշտ է իր ժամանակի ակնիվ մարդկանց, նա անհրաժեշտ է բոլոր ժամանակներին,—ամբողջովին վերաբերում են հենց իրեն՝ Ֆրանց Վերֆելին և նրա գլուխգործոց «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպին:

Այդ հիմնավոր, մինչև օրս էլ այժմեականությունը պահպանած գիրքն առաջին անգամ է լույս տեսնում ռուսերեն, և ես վստահ եմ, որ այսօրվա ընթերցողը կըմբռնի նրա հույժ արդիականությունը, նրա ցավը, մեր ժամանակի խորունկ հակասությունների մեջ թափանցելու ուժը և կուրախանա հոգի պարուրող կարեկցանքով:

Ինձ թվում է, որ Յուլիուս Ֆուչիկի վերջին՝ «Մարդի՛կ, ես ձեզ սիրում էի: Զգո՛ն եղեք» խոսքերը կարող են լավագույն գրախոսությունը լինել նրա ավագ հայրենակից Ֆրանց Վերֆելի գրքի մասին, որովհետև երկուսին էլ առաջնորդել է նույն համոզմունքը, նույն հավատարմությունը մարդկային եղբայրությանը, նույն համոզվածությունն այն բանում, որ դահիճները, որքան էլ դաժան լինեն, դատապարտված են պարտության, մանավանդ որ դաժանությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ վախկոտության մյուս երեսը:

Երևանում, Հրազդանի բարձրադիր ափին հառնում է Ցեղասպանության զոհերի տխուր հուշարձանը, Թուրքիայի պատմության ամոթի հուշարձանը: Հուշարձանն այն ապգայնամոլ ոճրագործության, որ կարելի է համարել ֆաշիզմի առաջին ռեալ գործունեությունը 20-րդ դարում և որի հետևանքով 1915 թվականին ոչնչացվեց հայության կեսը: Դաժանությա՛ն հուշարձանը, մեր երկրագնդի բոլոր ժողովուրդներին զգոնության կոչող հուշարձանը:

Եվ ամեն անգամ, երբ ես լինում եմ այնտեղ, լսում եմ Կոմիտասի ողբը, զարմանքով ու տագնապով հագեցած սրտակեղեք լացը, մարդկային հոգու և տիեզերքի ողբը, որն իր հավերժական հնչողությամբ ուղղված է գալիք ժամանակների մարդկային բոլոր հոգիներին: Այդ ողբն իմ հոգու մեջ խառնվում է Մայդանեկի և Օսվենցիմի, Կլոոգի և Բուխենվալդի ողբին, Լիդիցայի և Խատինի երեխաների ճիչին:

Բայց Ֆրանց Վերֆելն իր գրքում անդրադարձել է ոչ այնքան զոհերին, որքան հերոսներին, ոչ թե դաժանությանը պասիվորեն հնազանդվելուն, այլ դիմադրությանը, դահիճների ոճրագործությանն ակտիվորեն դիմագրավելուն:

Նրա գրքի հերոսը՝ Գաբրիել Բագրատյանը, ծագումով հայ է, հարուստ ծնողների զավակ, որը հումանիտար փայլուն կրթություն է ստացել Եվրոպայում, թուրքական բանակի սպա է՝ շքանշանների արժանացած Բալկանյան պատերազմում գործած սխրանքների համար: Նա իր ֆրանսուհի կնոջ ու որդու հետ, որպես մեռած եղբոր կալվածքի ժառանգորդ, Փարիզից վերադառնում է Թուրքիա՝ Մուսա լեռան ստորոտում գտնվող գյուղը, իր մանկության օրրանը, իր հայրենակիցների բնաջնջարիը:

Նա ամեն ինչ ունի՝ փող, ընտանիք, հիանալի տուն, կալվածք, կայուն դիրք հասարակության մեջ:

Բայց այդ թվացյալ բարեկեցության աջխարհը խարխլվելով՝ փլվում է չնախատեսված դեպքերի ճնշման տակ:

Ժամանակի թուրքական բանակի պարագլուխներից մեկը՝ Էնվեր փաշան, խաբեությամբ հավաքում է հայերի կենքը և, օրենքից դուրս համարելով, նրանց դեմ է ուղղում կրոնական մոլեռանդների ատելությունը, և ապգայնամոլ սանձարձակության մեջ հրով ու սրով սկսվում է հայ ժողովրդի պլանաչափ ու ծրագրված բնաջնջումը:

Եվ թուրքական բանակի սպայի, քաջագործությունների համար թուրքական շքանշաններ ստացած Գաբրիել Բագրատյանի վրայից ընկնում է եվրոպական կոսմոպոլիտիզմի պատյանը, ու նա դառնում է ի՛ր ժողովրդի զավակը, և դեպքերը նրան դարձնում են դիմադրության ղեկավար: Նա գիտե ռազմական գործը: Նա հավաքում է շրջակա գյուղերի հայ բնակչությանը և դաշտավայրից առաջնորդում դեպի Մուսա լեռ:

Բագրատյանը գտնում է համախոհներ ու զենք և ամրաշինության խստագույն կանոններով կազմակերպում պաշտպանությունը:

Նա նույնիսկ ժամանակ չի ունենում անդրադառնալու, թե ինչպես է ինքը նմանվում Լեոնիդասին, իսկ զինակիցները՝ Թերմոպիլեի ճակատամարտի հույներին:

Ողջ Թուրքիայի տարածքում ջարդում են հայերին: Նրանց թալանում և բռնի ուժով տեղահանում են իրենց հայրենիքից, դարավոր բնօրրանից և քշում են մահաջունչ վայրեր, ուր նրանք սովի ու անապատային անողոք խորշակի տանջանքների մեջ դատապարտված են մահվան:

Այդ նույն ձևով քառորդ դար անց Հիտլերի հրամանով էսէսականներն էին հրեաներին ու լեհերին, ռուսներին, գնչուներին ու բոլոր անցանկալիներին քշելու Օսվենցիմ, Ռավենսբրյուկ և Կլոոգ, քշելու էին դեպի գազախցիկները, հորերը, վառելու, գընդակահարելու էին կանանց, երեխաներին ու

ծերերին, և ողջ Եվրոպայի օդը հագենալու էր մարդկային մակերի խանձահոտով:

Ողջ Թուրքիայով մեկ ջարդում են հայերին, բայց կանգուն է մնում Մուսա լեռը, հայոց արիության անմատչելի բարձունքը: Լեռան կայազորը ետ է մղում Թալեաթի կանոնավոր զորքերի գրոհները: Արյունով ներկվում, բայց անընկճելի է մնում Մուսա լեռը: Նրա կայազորը այլ ելք չունի: Մնում է իր դիրքերում: Պաշտպանվում է ու հարձակվում: Ողջ աշխարհում մեն-մենակ, խելահեղության բոցով բռնված, չի վիջում մարդկային ոգու արիության իր բարձունքը:

Քառորդ դար անց նույն համառությամբ էին դիմադրելու Բրեստի և Գանգուտի, Հաջիմուշկայի և Օդեսայի, Լենինգրադի և Մոսկվայի պաշտպանները: Արիությամբ արյունակից բոլոր մարդիկ, մարդկային արժանապատվության բոլոր հերոսները:

Դիմանում է Մուսա լեռը: Դիմանում է քառասուն օր ու գիշեր՝ առանց հացի ու վառոդի: Մնում է կանգուն և կմնա այդպիսին իբրև տոկունության օրինակ բոլոր ժողովուրդների, համայն աշխարհի, ողջ մարդկության համար:

Եվ մահ չկա Մուսա լեռան հերոսներին, նրանց սխրանքը կմնա դարեդար, իր իսկ՝ ժամանակի հոգու մեջ:

Այդ սխրանքը բոլոր ժամանակներին ու բոլոր ժողովուրդներին իր գթառատ սրտով, իր հոգու արիությամբ, իր տաղանդի վարպետությամբ կտակել է գրող Ֆրանց Վերֆելը:

Նա այդ գիրքը գրեց 1933 թվականին: Գրեց իբրև նախազգուշացում ողջ Եվրոպային ու աշխարհին առ այն, որ երկրի երեսին հայտնվել է Հիտլերը, որն իր ետևից բերում է չափերով ավելի մեծ և դաժանությամբ ավելի խարդախ չարիք:

Եվ Ֆրանց Վերֆելը չսխալվեց ու իր ճակատագրով վարձահատույց եղավ այդ հայտնության համար: Հիտլերը Վերֆելին վռնդեց Ավստրիայից: Նա փոխադրվեց Փարիզ: Հիտլերը նրան վռնդել տվեց Փարիզից, և նա Թոմաս Մանի հետ թաքուն անցավ Իսպանիա, այնտեղից էլ Պորտուգալիայով՝ Ամերիկա: Հիտլերը կամեցավ նրան դարձնել վտարակ, բայց նա դարձավ աշխարհի որդին, մարդկանց երգիչը, այն մարդկանց, որոնց ոչինչ սարսափելի չէ, եթե յուրաքանչյուր որպես պատրաստ են մեռնել միմյանց համար:

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» գիրքը արիության հիմն է: Բացառիկ տաղանդով է գրված այն: Գրքի յուրաքանչյուր հերոս ունի իր բնավորությունն ու ձայնը: Այն խելացի ու հեռահար գիրք է:

Վեպը նախանձելիորեն երկար կյանք կունենա, որովհետև հոգուց բխած, կրքով հագեցած խոսքը դիմացկուն է անգամ այն մարմարից, որի վրա փորագրվում է:

Այդ գրքում ապրում և գործում են ճանաչման իմաստությունը, փորձի դառնությունը և կանխատեսման անողոքությունը, ընդ որում՝ այն գրված է, ինչպես և վայել է մեծ գրողին, ոչ թե միտումնավորությամբ, այլ առարկայական ճշմարտացիության այն չափով, որը գիրքը դարձնում է իր ժամանակի հոգևոր երևույթ:

Հրապդանի ափին հառնում է Ցեղասպանության տխուր հուշարձանը: Այնտեղ, խոնարհված սյուների տակ, ինչպես հավերժության քարե ափերի մեջ, վառվում է հիշողության հավերժական կրակը, և հնչում է հոգեպարար երաժշտություն, լուսավորելով մարդկային հոգին:

Բայց, այդ հուշարձանից բացի, քաղաքից դուրս, Էջմիածին տանող ճանապարհին, Մուսալեռ գյուղում, հենց այն գյուղում, ուր ապրում են Մուսա լեռան պաշտպանների շառավիղները, կա մի այլ՝ Մուսա լեռան հերոսներին նվիրված հուշարձան: Այն հառնում է բլրի գագաթին որպես խիզախության աշտարակ, կառուցված կարմիր տուֆից: Նրա ճակատային մասում քանդակված է թևատարած արծիվ՝ իբրև մարդկային հոգու արիության ու գեղեցկության խորհրդանիշ:

Այդ հուշարձանը ժողովուրդն է կառուցել: Եվ ամեն տարի Մուսա լեռան Հաղթանակի օրը այստեղ հավաքվում են հերոսների ժառանգները և լուռ երդում են տալիս՝ մարդկային եղբայրության ճամփով տանել սրխրանքի էստաֆետը: Սրբատաշ տուֆի կարմիր որմածքի վրա դեռևս չի փորագրված Մուսա լեռան և ոչ մի հերոսի անուն: Դրանք դեռ կգրվեն: Անխտիր բոլորինը: Այդ անունների շարքում կուզեի տեսնել նաև Ֆրանց Վերֆելի անունը, մի մարդու, որը վերակերտեց այդ սխրանքը բոլոր մարդկանց ու բոլոր ժամանակների համար:

Նա արժանի՛ է դրան:

Մ. ԴՈՒԴԻՆ